

Լրատու

Թիւ 4
Յուլիս 2007

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Սիրելի հայրենակիցներ,

21 Մայիս 2007ին բոլորեցի Ներկայացուցիչի հևգամեայ պաշտօնավարութեանս առաջին տարին եւ մեկ տարուայ ընթացքին ունեցայ բաւական բեղուն ու արդիւնաւետ գործունեութիւն, հիմնական լուծում տալով կարգ մը կարեւոր հարցերու, որոնց ամփոփումը պիտի տեսնեք էջ 4ին մէջ, իսկ գրասենեակիս աշխատանքները ընթացան հեզասահ կերպով, որոնց մասին ատենիս տեղեկացաք դարձեալ «Լրատու»ի միջոցով:

Խորհրդատու Մարմինի վերջին նիստի ընթացքին, օրակարգի գլխաւոր նիւթն էր Ներկայացուցիչի միամեայ գործունեութեան քննարկումը: Ժողովին ներկայ եղող անդամները, ամենայն ազատութեամբ արտայատուելով, տուին իրենց արժեւորումը: Ընդհակալութիւն կը յայտնեմ բոլորին անհատապես, իրենց ցուցաբերած բժախնդիր մօտեցումին եւ անկեղծ թելադրանքներուն համար: Ընդհակալութիւններս կը փափաքիմ յայտնել նաեւ բոլոր անոնց, որոնք հեռաձայնով եւ կամ անձնապես իրենց երախտագիտութիւնը փոխանցեցին ինձի այս առիթով:

Վերջին եռամսեայի իրադարձութիւններուն ծիրեն ներս, պիտի ուզեի ցաւալի մատուանչում մը կատարել բոլորին անխտիր, ցաւ ի սրտի յիշելով Ապրիլ 24ի ոգեկոչման հասդիսութիւններու պարագան, որոնց ընթացքին ի յայտ եկաւ Կիպրահայութեան անտարբեր կեցուածքը մեր 1.5 միլիոն նահատակներուն հանդեպ: Կիպրացի քաղաքական դեմքեր եւ դեսպանութիւններ յարգանքով եւ լրջութեամբ իրենց լայն մասնակցութիւնը բերին քաղաքական ձեռնարկին, որ կազմակերպուած էր հայկական երեք կուսակցութիւններու կողմէ, մինչ հայ ներկաներու թիւը ամօթալի տոկոս կը կազմէր: Լրատուական աղբիւրները պատշաճ ձե-

Իով անդրադարձան 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան, մինչ մեր հայորդիները զլացան իրենց հանգիստն զոհել մեկ կամ երկու ժամ, վերանորոգելու համար Յայ ժողովուրդի պահանջատիրութեան ուխտը եւ յարգելու յիշատակը մեր անմեղ զոհերուն: Աւելորդ է յիշել Եկեղեցական հոգեհանգստեան արարողութեան Կիպրահայութեան մասնակցութեան փոքր թիւը, որ տարուե տարի նուազում կ'արձանագրէ:

Եռամսեայի ամենագլխաւոր իրադարձութիւններն մեկը կարելի է համարել Կիրակի, 6 Մայիս 2007ին, դեպի Մակարավանք ուխտագնացութեան կազմակերպումը: 33 տարիներ ետք, մեծաթիւ խումբով այս ուխտագնացութիւնը, լայնօրէն արձագանգ գտաւ ո՛չ միայն կիպրական լրատուական աղբիւրներու միջոցաւ, այլև Կիպրոսի բռնագրաւեալ շրջանի թրքական գլխաւոր թերթերը դրական կերպով արտայայտուեցան այս մասին:

Ցունիսի մեջ, Նախարարաց Խորհուրդը, դարձեալ սեղանի վրայ դնելով կրօնական փոքրամասնութիւններու պարտադիր գինուորական ծառայութեան հարցը, որոշեց թէ 2008 թուականն սկսեալ, 18 տարիքը ամբողջացնող բոլոր տղաքը պետք է կատարեն իրենց գինուորական ծառայութիւնը ուսումի չմեկնած: Ինչպէս «Լրատու»ի նախորդ թիւին մեջ նշած էինք, Խորհրդատու Մարմինի համախոհութեամբ որդեգրած էինք դրական կեցուածք ցուցաբերելու քաղաքականութիւնը, միեւնոյն ատեն Կիպրոսի Յանրապետութեան Նախագահին նամակ մը ուղղելով, անոր ուշադրութեան յանձնած էինք կարգ մը մտահոգութիւններ: Այս գծով այլ մասրամասնութիւններ կարդալ «Լրատու»ի յաջորդող էջերուն մեջ:

Ինչ կը վերաբերի Կիպրոս բնակութիւն հաստատած մեր հայունակիցներու կեցութեան եւ քաղաքացիութեան դիմումներուն, որոնք առկախ մնացած էին զանազան պատճառներով, ներկայ պայմաններուն տակ եւ Եւրոպական Միութեան պարտադրած օրենքներուն համաձայն, մեր կա-

րելիութեան առաւելագոյն սահմաններէն ներս կը փորձենք լուծել անոնց հարցերը:

Գալով Զաղաքական Ապաստանեալ կարգավիճակ ունեցողներուն, շատ խիստ քայլեր առնուած են անոնց նկատմամբ: Զգալիօրէն, Ապրիլ 2007ին սկսեալ, հարցաքընութեան կանչուելով 99.9% մերժում կը ստանայ: Յայստանեն, Վրաստանեն, Լիբանանեն, Սուրիայէն եւ այլ երկիրներէ եկած մեր հայրենակիցները, առանց այս կարգավիճակին լուրջ իմաստը հասկնալու, փաստաբաններու վճարումներ կատարելով, այս միջոցին դիմած են, երբ անկարելի եղած է իրենց կեցութեան արտօնագիրները նորոգել: Իրականութեան մէջ, անոնք Զաղաքական Ապաստանեալ չեն, այլ Կիպրոս եկած են ապաստան վնտուելու այս կամ այն պատճառներով: Զաղաքական Ապաստանեալի կարգավիճակ կը շնորհուի միայն անոնց, որոնք իրենց երկրի իշխանութիւններու կողմէ քաղաքական պատճառներով հետապնդուած են, կամ իրենց կեանքը կամ անձնական ազատութիւնը սպառնալիքի տակ կը գտնուի այդ երկրի իշխանութիւններուն կողմէ, իրենց գաղափարախօսական, կրօնական կամ այլ պատկանելիութեան լուրջ պատճառներով (տես «Լրատու» թիւ 1, էջ 9-10):

Յաջորդող Եջերէն պիտի տեղեկանաք պաշտօնական հանդիպումներու, տեսակցութիւններու եւ Կիպրահայութեան հետ առնչուող աշխատանքներու մասին:

Ուրախութեամբ նաեւ կը տեղեկացնենք թէ պատրաստ է «Լրատու»ի առաջին 4 թիւերուն անգլերէն ամփոփ թարգմանութիւնը, որ կրնաք ստանալ Երեսփոխանական Գրասենեակեն եւ կամ՝ կարդալ այցելելով

<http://www.armenianmp.com> ոստայնէջ, News Bulletin

Խօսքիս աւարտին, Ձեր բոլորին կը մաղթեմ ամառուան բարի եւ հաճելի արձակուրդ:

Վարդգես Մահտեսեան

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ

**Ամփոփում առաջին տարուայ
գործունեութեան գլխաւոր իրագործումներու
եւ նախաձեռնութիւններու
01.06.2006 - 01.06.2007**

- Ամբողջական թափանցիկութիւն գործունեութեան՝ եռամսեայ «Էրատու»ի հրատարակութեամբ
- Լիաժամ անձնակազմով եւ արդիական սարքերով օժտուած երեսփոխանական գրասենեակի հաստատում
- Մակարավանք ուխտագնացութիւն, 33 տարիներ ետք
- «Արեւ» Բարեսիրական հիմնարկութեան նախաձեռնութիւն
- Լրի Կրթանպաստի ապահովում Մելգոնեան Կրթական Հաստատութեան նախկին աշակերտներուն
- Մելգոնեան Կրթական Հաստատութեան հոդատարածքին վերապահպանում՝ Կիպրոսի Կառավարութեան կողմէ
- Երկար տարիներէ ետք, Թեմականի ընտրութիւն՝ յառաջացնելով իսկական համերաշխական ցանկ
- Այիս Տոմեթիոս գերեզմանատան շաբաթական դրութեամբ այցելութեան արտօնութեան ապահովում
- 3 հիմնական ծրագիրներու առաջարկի ներկայացում՝ ծրագրումներու գրասենեակ (Government Planning Bureau)
- Բնակարանային ապահովման դիմումներու լուրջ աշխատանք
- Կեցութեան եւ քաղաքացիութեան հարցերու ծրագրուած աշխատանք եւ հետապնդում
- Դժուարին քաղաքացիական եւ կեցութեան հարցերու լուծում, ինչպէս բանտէ ազատ արձակում՝ կեցութեան եւ աշխատանքի արտօնութեամբ, յատուկ քաղաքական ապաստանեալի կարգավիճակի ապահովում եւ այլն
- Զանազան Կրթաթոշակներու ապահովում
- Պետական Ներկայացուցիչի կողմէ հայ շրջանաւարտներու տարեկան համախմբում եւ հիւրասիրութիւն

ԵՌԱՎԱԾԱՅԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Քաղաքացիական հարցերու առևտութեամբ տարուող աշխատանքը մեր գրասենեակի գործուսեութեան գլխաւոր զբաղումներն մեկն են: Սփիւրքահայ միակ գաղութն ենք, ուր Պետական Ներկայացուցիչի գրասենեակը կը զբաղի այս հարցերով, հակառակ Երոպական Միութեան կողմէ սահմանուած դժուարին օրենքներուն, որ առաջնահերթութիւնը կու տայ Երոպական անդամ երկիրներու քաղաքացիներուն:

Հայ քաղաքական ապաստանեալներու կարգավիճակ ունեցողներու մեծաթիւ ներկայութիւնը Կիպրոսի մէջ, մեծ ճնշումի տակ դրած է մեր գրասենեակը: Տարիներով անորոշ մնացած այս կարգավիճակը ունեցողներուն ապագան, այս տարուայ Ապրիլ ամիսն սկսեալ, ստացաւ տարբեր բնոյթ, որ սակայն սպասելի էր: Կիպրոսի Կառավարութեան Փախստականներու Բաժանմունքը շատ խիստ քայլերու դիմելով, հարցաքննութեան սկսած է կանչել այդ անձերը կամ ընտանիքները, մեծ մասամբ մերժելով կատարած դիմումները:

Ունեցանք իրաքահայ անհատի մը պարագան, որ իր երկորի իշխանութիւններու կողմէ լուրջ քաղաքական հետապնդման ենթարկուելով, լքած էր իր ծննդավայրը եւ Կիպրոս մուտք գործած: Պետական Ներկայացուցիչի միջամտութեամբ ու Փախստականներու Բաժանմունքի յատուկ օրենքի ծիրեն ներս, անոր շնորհուեցաւ աշխատանքի եւ կեցութեան արտօնագիր:

Մեր աշխատանքները ընդհանրապէս կերրոնացած են այս անհատներու կամ ընտանիքներու կարգավիճակներուն վրայ, որոնք 5-7 տարուայ ընթացքին մեծ մասամբ Կիպրոսի Կառավարութեան Օտարահպատակներու եւ

Ներգաղթի բաժանմունքի օրենքները ամբողջացուցած են եւ ուղղութեան կամ միջնորդութեան կը կարօտին, լուծելու համար անոնց կեցութեան հարցերը:

Քաղաքացիական հարցերու պատասխանատուն մօտեն աշակցեցաւ կեցութեան արտօնութիւններ նորոգելու ապահովման եւ քաղաքացիութեան դիմումներ կատարողներու աշխատանքներուն:

Առողջապահական-բժշկական

Պրն. Սահմանադրութեան դասաւորումով, ինչպէս նաեւ գաղութեն Ներս գործող կարգ մը միութիւններու եւ անհատներու նիւթական օժանդակութեամբ, Լիմասոլաբնակ հայ տիկին մը, Կիպրոսի դուրս վիրաբուժական գործողութեան Ենթարկուեցաւ:

Կրթանպաստ

Անակնկալ կրթանպաստի դիմումներ ստացանք 2007 տարեշրջանի կիսուն, որ Պետական Ներկայացուցիչի միջնորդութեամբ մեծ մասամբ լուծուեցան: Դոս կը փափաթինք յիշել, թէ շատ կարեւոր է կրթանպաստ ստացող աշակերտներուն բարձրագոյն նիշեր ձեռքբերելու անհրաժեշտութիւնը, որպէսզի դիրանայ նիւթական օժանդակութիւն ապահովելու շարունակականութիւնը:

Ուխտագնացութիւն Մակարավանք

Կիրակի, 6 Սայիս 2007ին, միացեալ կազմակերպութեամբ Պետական Ներկայացուցիչի գրասենեակին եւ Ազգային Առաջնորդարանին, 33 տարիներ ետք տեղի ունեցաւ զանգուածային ուխտագնացութիւն դեպի Մակարավանք: Այս ուխտագնացութիւնը կը վայելէր Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան վերահսկողութիւնը:

Այս առիթով կազմուեցաւ յատուկ յանձնախումբ մը, որ մի քանի նիստեր գումարելով, լաւագոյն կերպով ծրագրեց ու կազմակերպեց այս ուխտագնացութիւնը:

Շուրջ 300 հոգինոց խումբ մը, Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ աւանդական հերիսայի օրինութենէն Ետք, ճամբար Ելաւ ուղղուելու դեպի Մակարավանք, որ կը գըտնուի Կիպրոսի բռնագրաւեալ բաժինին մէջ:

Մակարավանք ժամանելուն, քանդուած խորանին դիմաց համախմբուելով, գաղութի անդամները Վարուժան Արքի եւ Տէր Մոմիկ քահանայի առաջնորդութեամբ, սըրտանց աղօթեցին, յուսալով որ, օր մը, դարձեալ վերանորդուած պիտի տեսնեն պատմական արժեք ունեցող երբեմսի այս հայկական վանքը: Զգացումները խառն էին ու տեսարանները յուզիչ: Գրեթէ կիսաւեր վիճակի մէջ գըտնուող Մակարավանքը, քանդուելու վտանգի տակ է, եթէ մօտ ապագային պէտք եղած նորոգութիւնները չկատարին, ըստ ճարտարապետ Պրն. Ճոն Կէվհերեանի:

Այս պատմական այցելութեան, Կիպրական, ինչպէս նաեւ Կիպրոսի թրքական լրատուական աղբիւրները լայնօրէն անդրադարձան:

Տեղին է յիշել թէ Պոլսոյ Արքեպիսկոպոս Մեսրոպ Մութաֆեան կաա հաստատելով Պրն. Մահտեսեանին հետ, փափաք յայտնած էր իր մասնակցութիւնը բերելու այս ուխտագնացութեան, սակայն կամքէ անկախ պատճառներով չկարողացաւ ներկայանալ:

Ուխտագնացները ոգեւորուած առաջարկեցին, որ յաջորդ տարի աւանդական հերիսայի պատրաստութիւնն ու օրինութիւնը կատարուի Մակարավանքի շոշափակեն ներս:

Այս ուխտագնացութեան միակ խաչաձեւումը, նոյն օրը Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նիկոսիոյ տիկնանց օժանդակ մարմինին հերիսայի կազմակերպումն էր: Երկու ամիս առաջ յայտարարուած այս ձեռնարկը կազմակերպողները կը ծգտէին համերաշխութեան եւ միասնականութեան ոգին արթնցնել Կիպրահայ գաղութեն ներս՝ հասարակաց տօներու եւ կամ առիթներու նկատմամբ: Մակարավանքը բոլորիս ժառանգութիւնն է եւ կա-

րելի չէ հերքել այս իրականութիւնը անտեղի խաչաձեւում-ներով:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, 11 Յունիսին Պրն. Մահտեսեանի գլխաւորած պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցաւ Ընդհանուր դատախազ Պրն. Պետրոս Զլիրիտիսին հետ, քննելու Մելգոնեան Կրթական Հաստատութեան ապագային առնւելիք նորագոյն քայլերը, որու ընթացքին փոխանցուեցաւ թէ Ընդհանուր Դատախազը Կրթական Նախարարութենեն տեղեակ պահուած էր թէ, Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հաւանութեամբ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան շենքերը մէկ կամ երկու տարւայ համար անվճար պիտի տրամադրուին Աղլանճայի կըրթարանին: Յետեւաբար, հարցի անմիջական հետապնդումը անհնար պիտի ըլլար այս ժամանակամիջոցին:

Տեղին է յիշել, թէ Յայ Յամայնքի Պետական Ներկայացուցիքը, վերոյիշեալ կարգադրութեան մասին, նախօրօք տեղեակ պահուած էր բարեացակամ եւ թափանցիկ ձեւով աշխատող Կիպրոսի Կառավարութեան կողմէ եւ յայտնած էր իր համամտութիւնը Մելգոնեան Կրթական Հաստատութեան շենքերը անվճար տրամադրելու գաղափարին առընչութեամբ, որպէս փոխադարձ եւ օրինակելի ժեստ պետութեան կողմէ Կիպրահայ գաղութին ընծայուած օժանդակութիւններուն:

Թելադրելի պիտի ըլլար, որ այս դասաւորումը պատասխանատու անհատներու կողմէ, ըլլար բացայայտ եւ թափանցիկ, յարգելով ո՛չ միայն Կիպրահայ Պետական Ներկայացուցիչին պաշտօնն ու հանգամանքը, այլեւ Կիպրահայ գաղութը տեղեակ պահուէր այս ընթացքին մասին: Մութ գործելակերպով եւ պայման դնելով՝ յետագայի ակընկալութեամբ, որ Պրն. Զլիրիտիս ետ քաշուի հարցին հետ առնչուելու իր պատրաստակամութենեն, անգամ մը եւս կը փաստուին Յայկական Բարեգործական Ընդհանուր Միու-

թեան յետին նպատակները, որոնք պատճառ դարձան ՄԵԼ-գոնեան Կրթական Հաստատութեան փակումին եւ ապագայի ոչ հայանպաստ ծրագիրներուն:

Պարտադիր զինուորական ծառայութիւն

Չորեքշաբթի, 20 Յունիս 2007ին Նախարարաց Խորհուրդը, անգամ մը եւս քննելով, վաւերացուց փոքրամասնութիւններու պարտադիր զինուորական ծառայութեան մասնակցութիւնը:

Յետայսու, 2008 թուականեն սկսեալ, 1 Յունուար 1990են ետք ծնած տղաքը, որոնք ամբողջացուցած են իրենց երկրորդական ուսումը, պարտաւոր են կատարելու ազգային բանակի ծառայութիւնը:

Իսկ 16 տարիքը ամբողջացնող տղաքը, ճամբորդութեան ժամանակ պետք է ներկայացնեն երկրեն դուրս ելլելու արտօնագիր, որ կը տրուի Պաշտպանութեան Նախարարութեան գրասենեակէն:

Յանձնախումբեր

Երիտասարդական Յանձնախումբի կազմակերպած հաւաքը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 11 Ապրիլ 2007ին «Իւթիւնեան» սրահին մէջ, Ներկայութեամբ 40 երիտասարդ-երիտասարդուիիններու: Հաւաքի ընթացքին ներկաները արտայայտուեցան երիտասարդութիւնը յուզող հարցերու մասին եւ առաջարկներ յայտնեցին զանոնք քով քովի բերելու մասին:

Կիպրոս-Հայաստան Յանձնախումբը Ուրբաթ, 18 Մայիս 2007ին ժողով մը գումարեց, ուր առաջարկուեցաւ նախ կապ հաստատել Կիպրոս գտնուող մեր հայաստանցի հայրենակիցներուն հետ եւ փորձել անոնց միջոցաւ սերտացնել Կիպրոս-Հայաստան փոխ-յարաբերութիւնները, տարբեր մարզերու մէջ:

Երեքշաբթի, 29 Մայիս 2007ին, Մշակութային Յանձնախումբը հանդիպում մը ունեցաւ ներկայութեամբ Տիկ.

Ժաննա Թահմիզեանի, ուր արծարծուեցաւ Յայաստանին բարձրորակ խումբեր իրաւիրելու կարելիութիւնը, Ելոյթներ ունենալու համար Կիպրոսի մեջ, ինչպէս նաեւ քաջալերել տեղական ուժերով Մշակութային ձեռնարկներ կազմակերպելու հնարաւորութիւնը:

Չորեքշաբթի, 30 Մայիս 2007ին Խորհրդատու Մարմինը գումարեց իր 3-րդ նիստը, քննարկելու Պետական Ներկայացուցիչի միամեայ գործունեութիւնը:

Ծնորհաւորական գիրեր

«Ազդակ» օրաթերթի 80-ամեակին առիթով, 21 Մայիս 2007 թուակիր նամակով, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորագիր մը ուղղեց թերթի խմբագիր տնօրէն Պրև. Շահան Գանտահարեանին, գնահատելով անցեալի ու ներկայի խմբագիրներուն եւ աշխատակազմին նուիրումը:

23 Մայիս 2007 թուակիր նամակով, Պրև. Մահտեսեան շնորհաւորագիր մը ուղղեց Պրև. Խորհստոտուլոս Փաշարտիսին, Պաշտպանութեան Նախարար Նշանակուելուն առիթով, նորանոր յաջողութիւններ մաղթելով:

23 Մայիս 2007 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Պրև. ճորժ Տէր Բարթողը Կիպրացի լրագրողներու շարքին գնահատանքի արժանանալուն գծով, որպէս երկար տարիներու վաստակ ունեցող հայզգի լրագրող:

11 Յունիս 2007 թուակիր նամակներով, Պրև. Մահտեսեան անհատապէս շնորհաւորեց Պրև. Յովիկ Նասանեանն ու Պրև. Դանիէլ Չորպաճեանը, «Esther» երաժշտախառն ներկայացումին յաջողութեան ի նպաստ իրենց բերած ներդրումին համար, իբրեւ հայազգի հմուտ արտադրիչներ:

Նշանակումներ

Տիկին Խորհսուլլա (Ուկի) Չորպաճեան, 19 Յունիս 2007ին անդամ նշանակուեցաւ Կրթական Նախարարութեան եւ Եունեսքոյի համագործակցութեամբ Մշակութային

արժեքներու վերապահպանման յանձնախումբին:

Կրթական Նախարարութենեն ստացուած 28 Յունիս 2007 թուակիր նամակը վաւերացուց Պրն. Մահտեսանի կողմէ առաջարկուած Պրն. Սեպուհ Դաւիթեանին նշանակումը, որպէս Նարեկ Հայկական Վարժարաններու Հոգաբարձական Սարմինի անդամ: Պրն. Սեպուհ Դաւիթեան փոխարինեց կազմեն վերջերս հրաժարած Պրն. Արամ Դաւիթեանը:

ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկար տարիներու յետաձգումեն ետք, Կիրակի, 26 Մայիս 2007ին տեղի ունեցան թեմական ընտրութիւնները, համերաշխութեան ցանկի մը շուրջ համաձայնելով:

Այս ընտրութիւններու գծով կարգ մը ազգայիններու կողմէ կատարուած աշխատանքը, գլխաւորութեամբ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ օժանդակութեամբ Պետական Ներկայացուցիչի, բարձր գնահատելի էր: Արդիւնքին գծով եղան կարգ մը թիւրիմացութիւններ, որոնք լուծուեցան բարուք կերպով: Փափաքելի է որ այս նոր կազմը ձեռք ձեռքի տալով գործէ, ի շահ մեր Եկեղեցական եւ գաղութի բարորութեան:

ՊԵՏԱԿԱՆ-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Երկուշաբթի, 2 Ապրիլին, Պետական Ներկայացուցիչը հանդիպեցաւ Ելրոպական Միութեան Խորհրդատու Մարմինի Փոքրամասնութիւններու Ազգային Դիմագիծի Պահպանութեան յատուկ յանձնաժողովի պատուիրակութեան հետ, ուր ան Ներկայացուց Կիպրահայ համայնքը յուզող կարգ մը հարցեր, շեշտելով հանդերձ Կիպրոսի բարեխնամ կառավարութեան ցուցաբերած մօտեցումը: Այս մեկը յանձնաժողովի 2-րդ այցն էր Կիպրոս:

Նոյն օրը, Երկուշաբթի, 2 Ապրիլ 2007ին Պրն. Մահտեսան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Արդարադատութեան Նախարար Պրն. Սոֆորիս Սոֆորլեուսին հետ, ան-

հատի մը հարցին կապակցութեամբ:

Ուրբաթ, 13 Ապրիլ 2007ին Պրն. Մահտեսեան ժողով մը ունեցաւ Կիպրոսի Յամալսարանի տնօրէն Դոկտ. Անտրեաս Խրիստոֆիտիսի եւ աշակերտական հարցերու տնօրէն-պատասխանատու Պրն. Ֆիլիպպոս Բանտուրասի հետ:

Երեքշաբթի, 17 Ապրիլ 2007ին Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կրթական Նախարարութեան Միջին Կրթութեանց պատասխանատուներ Պրն. Տիոնիսիուսի եւ Պրն. Ջիթրոսմիլիհիտիսի հետ: Ան առաջարկեց Կիպրական երկրորդական եւ օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներուն տրամադրուած կրօնքի դասապահերը լաւագոյնս օգտագործելու նպատակով, զանոնք փոխարինել հայ լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցումով, նկատի ունենալով որ մեր Եկեղեցին արդէն իսկ շաբաթական դրութեամբ կրօնքի դասաւանդութեան պարտականութիւնը յանձն առաջ է: Այս առաջարկը 30 Մայիս 2007 թուակիր նամակով յղուցաւ Կրթական Նախարարութեան Միջին Կրթութեանց տնօրէնութի Տիկ. Զինա Պուլիին, նշելով նաեւ արդիական դասագիրքերու պատրաստութեանց կարիքը:

Երեքշաբթի, 8 Մայիս 2007ին Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կրթական Նախարար Պրն. Աքիս Ջլէանթուսին հետ, Կիպրահայ գաղութի կրթական հարցերու առնչութեամբ:

Քինգշաբթի, 10 Մայիս 2007ին Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Դոկտ. Լազարոս Սահմանիսի հետ, կարգ մը հարցերու կապակցութեամբ:

Չորեքշաբթի, 23 Մայիս 2007ին Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Խորհրդարանի Նախագահ Պրն. Տիմիթրիս Խրիստոֆիասի հետ, Ներկայութեամբ Յայաստանի Լրագրողներու Միութեան Նախագահութի Տիկ. Աստողիկ Գեղրգեանի եւ «Ազգ» օրաթերթի խմբագիր Պրն. Յակոբ Աւետիքեանի:



Արիս Քլէանթուսի հետ



Էլենի Մալրուի հետ

Երեքշաբթի, 29 Մայիս 2007ին Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Նիկոսիոյ քաղաքապետ Տիկ. Էլենի Մալրուի հետ, Նիկոսիոյ հին գերեզմանատան հարցին, ինչպէս նաեւ 18-26 Օգոստոսին Հայաստանի մէջ կայանա-

լիք Համահայկական Դ. մարզախաղերուն գծով, Նիկոսիան Ներկայացնող մարզիկներու խումբին օժանդակութիւն ապահովելու համար:

Քինգշաբթի, 31 Մայիս 2007ին Պետական Ներկայացուցիչը իր գրասենեակին մէջ ընդունեց Կիպրոսի մէջ Միացեալ Նահանգներու նոր Նշանակուած քաղաքական հարցերու պատասխանատու Տիկ. Եմի Տահմը: Այս այցելութեան հիմնական նիւթն էր 2006 թուականի միջազգային կրօնական ազատութեան տեղեկագիրը, որու ծիրեն ներս անդրադարձ եղաւ Մակարավանք ուխտագնացութեան, ինչպէս նաեւ լայն գիծերու մէջ աև ծանօթացաւ Կիպրահայ գաղութի Ներկայի ու անցեալի իրավիճակին:

Ուրբաթ, 1 Յունիս 2007ին Պրն. Մահտեսեան եւ Կիպրոսի միւս փոքրամասնութիւններու Ներկայացուցիչները հանդիպում մը ունեցան նոր Նշանակուած պաշտպանութեան նախարար Պրն. Խրիստոսովուն Փաշարտիսին հետ, ուր անոնց փոխանցուեցաւ փոքրամասնութիւններու պարտադիր գինուրական ծառայութեան մասնակցութիւնը, 2008 թուականեն սկսեալ:

Երկուշաբթի, 11 Յունիս 2007ին Կիպրահայ ազգայիններէ քաղկացած յանձնախումբը, գլխաւորութեամբ Պետական Ներկայացուցիչին, տեսակցութիւն մը ունեցաւ Ընդհանուր Դատախազ Պրն. Պետրոս Թլիրիտիսին հետ, քննելու համար Մելքոնեան Կրթական Հաստատութեան Ներկայ եւ ապագայի զարգացումները:

Ուրբաթ, 15 Յունիս 2007ին Պրն. Վարդգէս Մահտեսեան իրաւուցաւ Իտալիոյ դեսպանատուն, տեսակցութիւն մը ունենալու համար Դեսպան Պրն. Լուիժի Նաբոլիթանոյի հետ, ուր ան Պետական Ներկայացուցիչին յանձնեց Ս. Ղազար Վանքին մէջ գտնուող 14-րդ դարու «Պատմութիւն Մակեդոնիոյ Ալեքսանդրին» հայերեն թնագիր մատեանին (manuscript) օրինակը: Իր կարգին Պրն. Մահտեսեան այս մեծածաւալ տպագրութիւնը յանձնեց Ազգային Առաջնորդարան:

ԶԵՆՆԱՐԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 13 Ապրիլ 2007ին Պրև. Մահտեսեան հրաւիր-
ւեցաւ ներկայ գտնութելու Եւրոպական Միութեան Կիպրոսի
Կեդրոնի բացումին, ուր խօսք առաւ Կիպրոսի Հանրապե-
տութեան Նախագահ Պրև. Տասոս Փափատովիուլոս:

Կիրակի, 22 Ապրիլ 2007ին Տեր եւ Տիկին Մահտեսեան-
ներ ներկայ գտնութեցան Համազգայինի «Օշական» մաս-
նաճիւղի «Սիփան» պարախումբի տարեկան ելոյթին:

Չորեքշաբթի, 25 Ապրիլ 2007ին Տեր եւ Տիկին Մահտե-
սեաններ ներկայ գտնութեցան Հայկական Ցեղասպանու-
թեան 92-րդ ոգեկոչման քաղաքական ծեռնարկին, որ տեղի
ունեցաւ Cyprus International Conference Centre-ին մէջ,
կազմակերպութեամբ հայկական երեք կուսակցութիւննե-
րուու: Օրուան բանախօսն եր Յունաստանեն յատկապես
հրաւիրուած նախկին խորհրդարանի նախագահ Պրև.
Աքոստոլոս Քաջլամանիս, որմէ ետք խօսք առաւ Պրև.
Մահտեսեան, մատևանշելով օրըստօրէ Հայկական Ցեղաս-
պանութեան ճանաչման ի նպաստ միջազգային գետնի
վրայ արձանագրուող զարգացումները: Ան մասնաւրա-
բար նշեց թէ Հրանդ Տինքի անարգ սպանութիւնը չի կրնար
կասեցնել Հայ ժողովուրդի արդարութիւնը պահանջող աշ-
խատանցները շարունակելու սուրբ պայքարը:

Հինգշաբթի, 26 Ապրիլ 2007ին Կիպրոսի Խորհրդարանը
մէկ վայրկեան յոտնկայս լուսութեամբ յարգեց 1915-ի Ցե-
ղասպանութեան գոհերու յիշատակը, որմէ ետք խօսք
առաւ Պետական ներկայացուցիչը:

Ուրբաթ, 27 Ապրիլ 2007ին Տեր եւ տիկին Վարդգես Մահ-
տեսեան ներկայ գտնութեցան «Իւթիւնեան» սրահին մէջ տե-
ղի ունեցած Կիպրոսի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ
կազմակերպած դասախոսութեան, որու նիւթն էր «Հայկագ-
եան Համալսարանի դերը սփիւռքի հայապահանման
մարտահրաւերներուն դէմ»:

Չարբաթ, 28 Ապրիլ 2007ին Տեր եւ Տիկին Մահտեսեան-
ներ ներկայ գտնութեցան Հ.Ե.Ս.- Հ.Ս.Ը.Ս.ի կազմակերպած

խրախճանք-ճաշին, որ կազմակերպուած էր մասնաւորաբար որպէս Միջգաղութային մարզական խաղերու եզրափակիչ ձեռնարկ:

Կիրակի, 29 Ապրիլ 2007ին Պետական Ներկայացուցիչը Եւ տիկինը ներկայ գտնուեցան Փասխտիի սրահին մեջ տեղի ունեցած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 117-ամեակի ձեռնարկին:

Նոյն օրը, 29 Ապրիլին Տէր Եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման պաշտամունքին, ուր, խօսք առնելով, Պետական Ներկայացուցիչը շեշտեց միասնականութեան անհրաժեշտութիւնը մեր գոյատեւման պայքարի ընթացքին:

Ուրբաթ, 11 Մայիս 2007ին Տէր Եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ակումբի բացման արարողութեան: Պետական Ներկայացուցիչը խօսք առնելով, մաղթեց բեղմնաւոր գործունեութիւն, ինչպէս նաև՝ ձգուի Նոր սերունդին մօտ ազգային ու հայրենասիրական գիտակցութիւնը զարգացնելու:

Չորեքշաբթի, 16 Մայիս 2007ին Տէր Եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ էին Նարեկ Վարժարաններու մարզահանդեսին, քաջալերելու մարզասեր դպրոցականները:

Չորեքշաբթի, 23 Մայիս 2007ին Cleopatra պանդոկին մեջ տեղի ունեցած «Կանաչներու» կուսակցութեան վեցամեայ գործունեութեան ներկայացումին, այլ պաշտօնական այրերու կողքին, ներկայ գտնուեցաւ նաև Հայ Պետական Ներկայացուցիչը:

Կիրակի, 27 Մայիս 2007ին Տէր Եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի ներկայացումին, Փասխտիի սրահին մեջ:

Ճարագա, 9 Յունիս 2007ին Տէր Եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան «Esther» երաժշտախառն ներկայա-

ցումին, որ տեղի ունեցաւ Curium-ի մէջ: Պետական Ներկայացուցիչն հպարտութիւն ներշնչած էին երկու հայ արտադրիչներուն, ինչպես նաև մեծ թիւով հայ դերակատարներուն եւ երգչախումբի անդամներուն մասնակցութիւնը այս բարձրորակ ելոյթին:

Չորեքշաբթի, 13 Յունիս 2007ին Պետական Ներկայացուցիչն ու տիկինը ներկայ գտնուեցան Լառնագայի Նարեկ Վարժարանի հանդեսին, որ նուիրուած էր քառասնամեայ վաստակ ունեցող եւ հանգստեան կոչուող ուսուցչուիի Օրդ. Թալիա Փափանտոնիուին:

Կիրակի, 17 Յունիս 2007ին Նիկոսիոյ American Academy-ին Մելգոնեանցի վերջին շրջանաւարտներու փափաթին ընդառաջելով, Պրին. Սահտեսեան ներկայ գըտնուեցաւ աւարտական դասարանին յարգանքի տուրք մատուցելու արարողութեան, որ տեղի ունեցաւ Մելգոնեան Եղբայրներու դամբարանին առջեւ, գետեղելով ծաղկեփունչ մը:

Չորեքշաբթի, 20 Յունիս 2007ին Տէր եւ Տիկին Վարդգես Սահտեսեան ներկայ գտնուեցան Նարեկ Յայկական Վարժարաններու ամավերջի հանդեսին, ուր Պետական Ներկայացուցիչը եւ Կաթողիկոսական Փոխանորդը յաջորդաբար կատարեցին վկայականներու բաշխում: Յանդեսին Ետք, Տէր եւ Տիկին Սահտեսեաններ ներկայ գտնուեցան նաեւ Նիկոսիոյ Ծնողաց Սիութեան կազմակերպած հիւրասիրութեան, ի պատիւ շրջանաւարտներուն եւ հանգստեան կոչուող վաստակաշատ ուսուցչուի Տիկին Ալիս Դաւիթեանին:

Երեքշաբթի, 26 Յունիս 2007ին Տէր եւ Տիկին Վարդգես Սահտեսեան ներկայ գտնուեցան Լառնաքայի «Angelic Voices» երգչախումբի բացառիկ յաջող ելոյթին, որուն մաս կը կազմէին նաեւ հայ պատասիններ: Խումբին դեկավար եւ արհեստավարժ Սոփրանօ Տիկին Սիլվա Մաքամեան արժանացաւ ներկաներու գնահատանքին, ի մասնաւորի՝ Պրին. Սահտեսեանի:

Ղարաբաղի որբերու այցելութիւն

Ղարաբաղին ժամանած որբերու առաջին խումբը Կիպրոս ժամանեց Չորեքշաբթի, 13 Յունիս 2007ին: Պետական Ներկայացուցիչի գրասենեակը անմիջապես տեղեակ պահեց Հ.Ե.Ս.-ի, Հ.Բ.Ը.Ս.-ի եւ Ս.Դ.Յ.Կ.-ի ակումբները պատշաճ ձեւով հիւրընկալելու համար այս խումբը: Յաջորդաբար, Կիրակի, 17 եւ Երկուշաբթի, 18 Յունիսի երեկոյեան Հ.Ե.Ս.-ն ու յարակից Միութիւնները, ինչպես նաև Ս.Դ.Յ.Կ.-ը, յանձն առին հիւրասիրել զանոնք, իսկ Պր. Մահտեսեանի կարգադրութեամբ, 17 Յունիսին անոնք այցելեցին Պարալիմսի Ocean Aquarium-ը, ապա՝ Ս. Աստուածածին եկեղեցի, Ազգային Առաջնորդարան ու Նարեկ Վարժարան:



Ըստունելութիւններ

Ուրբաթ, 18 Մայիս 2007ի երեկոյեան Տեր եւ Տիկին Մահտեսեաններ իրենց բնակարանին մէջ հիւրընկալեցին Յայստանի Լրագրողներու Միութեան նախագահուի Տիկ. Աստոիկ Գեղրգեանը եւ «Ազգ» օրաթերթի խմբագիր Պր. Յակոբ Աւետիքեանը, Ներկայութեամբ Կիպրահայ մամուլի պատասխանատուններուն եւ խմբագրապետներուն:

Ինչպէս 2006 կրթական տարեշրջանի վերջաւորութեան, այս տարի եւս, Չորեցաբթի, 27 Յունիս 2007ին Պրն. Մահտեսեան իր բնակարանին մէջ հիլրասիրեց 2007 թուականի բոլոր հայ շրջանաւարտները եւ Նարեկ Հայկական Վարժարաններու տնօրենութիւնն ու ուսուցչական կազմը: Այս հիլրասիրութեան ներկայ էր նաեւ Կաթողիկոսական Փոխանորդ S. Վարուժան Արքեպիսկոպոս Հերկելեան եւ քահանայ հայրերը:

Եռօրեայ այցելութիւն Հայաստան

Հայաստանի Հանրապետութեան Արդարադատութեան Նախարարի պաշտօնական հրաւերով, Արդարադատութեան Նախարար Պրն. Սոֆորլիս Սոֆորլեուս, ընկերակցութեամբ Պրն. Մահտեսեանի, Հինգշաբթի, 28 Յունիս 2007ին մէկնեցաւ Հայաստան:



Զախեն աշ.-

Կոնստանդինոս Հաճիբալու, Սոֆորլիս Սոֆորլեուս,
Հայկ Յարութիւնեան, Վարդգևս Մահտեսեան
եւ Վահրամ Կաժոյեան

Եռօրեայ այցելութեան ընթացքին, Պրն. Սոֆոքլեուս եւ Պետական Ներկայացուցիչ արդիւնաւետ հանդիպումներ ունեցան Հայաստանի Արդարադատութեան Նախարար Պրն. Գեորգ Դանիէլեանին, ՀՀ Շնորհականութեան Պետ Պրն. Հայկ Յարութիւնեանին եւ ՀՀ Շնորհականութեան Պատախազ Պրն. Յնվսէփեանին հետ: Հանդիպումներն ետք, Նախարար Սոֆոքլեուս ուղղուեցաւ դեպի Ծիծեռնակաբերդ, ուր ծաղկեպսակ մը գետեղեց 1915-ի Ապրիլեան Եղեռնի զոհերու յուշարձանին առջեւ:

Կիպրոս վերադարձին, Հայ Երեսփոխանական Գրասենեակը հաղորդագրութիւն մը յηեց Կիպրական լրատուական աղքիւրսերուն, ուր տեղ գտան վերոյիշեալ հանդիպումները եւ Ծիծեռնակաբերդ այցը, նշելով թէ Պրն. Սոֆոքլեուս, կիսատ թողելով իր շրջապտոյտը, Կիպրոս վերադարձաւ Շաբաթ, 30 Յունիս 2007ին, Թրոտոս շրջանի աստաներու հրդեհին պատճառով:

**«Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան
օրենքներուն» բաժինը լոյս պիտի տեսնե
«Լրատու»ի յաջորդ թիւին մեջ:**

ԿԻՊՐԱՆԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy